«Կրթության ծախսեր/քննադատական մտածողության որակ» ծրագիր

Ամփոփում և առաջարկներ՝ ԿԳՄՍ նախարարությանը

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ/ mediaforedu.am ԶԼՄ-ն, ԵՄ աջակցությամբ և Իրավաբանների հայկական ասոցիացիայի ղեկավարած կոնսորցիումի հետ համագործակցությամբ, 2024 թ. նոյեմբերից 2025 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում իրականացրել է «Կրթության ծախսեր/քննադատական մտածողության որակ» ծրագիրը: Ծրագրի տեղեկատվական-վերլուծական արդյունքները հրապարակվել են mediaforedu.am կայքի «Փող և որակ» խորագրի ներքո:

Նախքան արդյունքների ներկայացումը կարևոր է ընդգծել, որ նախարարություն դիմելու հիմքում ընկած են հանրային ծախսերի թափանցիկության բարձրացման, կրթության ոլորտում քաղաքացիական հասարակության դերի ընդլայնման, հանրային քաղաքականության մշակման գործընթացում մասնակցության ապահովման և տվյալահեն որոշումների կայացման գործում «Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ի պատրաստակամությունը:

Ստորև ներկայացնում ենք ծրագրի վերլուծական արդյունքները՝ առաջարկներով:

Կրթության ծախսերի աճն ու որակի ցուցանիշների անհամեմատելիությունը

Ծրագրի շրջանակում իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ 2021 թվականից ի վեր (նոր կրթական չափորոշիչների ներդրմանը զուգահեռ) ՀՀ պետական բյուջեից կրթությանը հատկացվող ծախսերը տարեցտարի աճել են:

2021 թվականը կարևոր է նաև ՀՀ կառավարության փետրվարի 4-ի N 136-Ն որոշման տեսանկյունից, որով սահմանվել են միջնակարգ կրթության ավարտական կարողությունները, այդ թվում՝ լեզվական գրագիտությունը և քննադատաբար ու բազմակողմանի ուսումնասիրելու հմտությունները: «Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ի մանկավարժ փորձագետների կարծիքով, կրթության որակի առանցքային ցուցիչներն են գրագիտությունը, քննադատական մտածողությունը և ստեղծագործական կարողությունները:

Էսսեների ուսումնասիրության արդյունքներ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ. Հրամանով, 9-րդ դասարանի աշակերտները գրականություն և պատմություն առարկաների բանավոր քննության փոխարեն գրում են ինտեգրված էսսեներ:

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն ուսումնասիրել է Տավուշի մարզի երեք համայնքներում՝ քաղաքային և գյուղական դպրոցներում գրված 9-րդ դասարանցիների էսսեների մեկական փաթեթ՝ սովորողների մտածողության որակը վերհանելու նպատակով:

Հետազոտությունը ցույց է տվել, որ էսսեներում առկա են հիշողության վրա հիմնված վերարտադրողական, հուզական արտահայտությունների գերակայության, ձևական և հաճախ ակնհայտորեն ուղղորդված բովանդակության տարրեր: Տարբեր էսսեներում կրկնվում են նույն նախադասությունները. օրինակներ՝

- «Նար-Դոսը ստեղծագործել է սիրո մասին. . . »,
- «Ես-ը գահավիժում է կյանքի անդունդը»,
- «Անտոնիոյին կարելի է նմանեցնել ծաղկի, իսկ Ջուլիետային՝ ահասարսուռ փոթորկի»:

Այս օրինաչափությունները հուշում են, որ ուսուցիչների ուղղորդումը խոչընդոտում է ինքնուրույն մտածողության ձևավորմանը, զարգացմանն ու դրսևորմանը:

Առաջարկ 1
«Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն առաջարկում է ժամանակավորապես ձեռնպահ մնալ քննական էսսեները պարտադիր դարձնելուց այլ մարզերում՝ մինչև ուսուցիչների պատրաստության, գնահատման չափորոշիչների և գնահատողների վերապատրաստման համապատասխան բարելավումները: Առաջարկում ենք քննարկել աստիճանաբար ներդրման մոդել՝ հիմնված փորձնական շրջանների արդյունքների վրա:

Հղումներ էսսեների վերաբերյալ վերլուծություններին

- https://mediaforedu.am/essay-education-quality-indicator/
- https://mediaforedu.am/creative-child/
- https://mediaforedu.am/essay-in-armenia-and-eu-countries/
- https://mediaforedu.am/ability-writing-essay/

Ուսուցիչների ատեստավորման թիրախային ցուցանիշների և իրականության անհամապատասխանությունը

Վերլուծությունը ցույց է տվել, որ կամավոր ատեստավորման արդյունքում հավելավճար ստացող ուսուցիչների տոկոսը 2024-ին կազմել է 10.1%, մինչդեռ նախատեսված թիրախը եղել է 31%, իսկ 2030 թ. ՝ 80%: Ներկայիս տեմպերը չեն երաշխավորում այդ ցուցանիշների հասանելիությունը:

2022 թ. -ի գնահատման արդյունքները ցուցադրում են աննախադեպ տարբերություններ նույն բնագավառի առարկաների միջև (օր.՝ հայոց պատմություն/հասարակագիտություն՝ 70/0, մաթեմատիկա/ինֆորմատիկա՝ 50/3), ինչը վկայում է թեստավորման համակարգի անկանոնության մասին:

Առաջարկ 2
Անհրաժեշտ է պետական բյուջեով նախատեսել միջոցներ՝ թեստագիրների պատրաստման, թեստավորման չափորոշիչների վերանայման և արդարության ապահովման ուղղությամբ:

Վերլուծություն՝

- https://mediaforedu.am/voluntary-certification-expectation-and-reality/

Թափանցիկության և տեղեկատվության հասանելիության խնդիրներ

Թեև «Մեդիան հանուն կրթության» ՋԼՄ-ի հարցումներին արձագանքները ցուցադրել են համագործակցային մոտեցում, արձանագրվել են տվյալների լիարժեքության խախտումներ։ Օրինակ՝ ուսուցիչների բողոքարկումների տվյալները տրամադրվել են միայն լրացուցիչ հարցումից և ուշացման արդյունքում։

Հատկանշական է, որ 2023 թ. ներկայացվել է 822 բողոք, սակայն բարձրացվել է 2345 միավոր, ինչը փաստում է համակարգային խնդիրների մասին, սակայն այդ փաստերը պաշտոնապես չեն վերլուծվել և չեն հրապարակվել։

Առաջարկ 3
Առաջարկում ենք ուսուցիչների կամավոր ատեստավորման վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների հրապարակման մեջ ներառել նաև բողոքների քանակական և բովանդակային տվյալների վերլուծությունը, բողոքարկման արդյունքների բաց ներկայացումը՝ թափանցիկության ապահովման նպատակով։ «Ատեստավորված ուսուցիչների թիվը նախքան բողոքները» և «բողոքներից հետո» ենթագրերի ներքո հրապարակված տեղեկությունը ողջունելի է, սակայն առավել ամբողջական և թափանցիկ կլինի պաշտոնական տեղեկությունը, եթե հստակ նշվեն նաև բողոքների թվերը։

Ֆինանսավորման հարաբերակցություն՝ ՀՆԱ-ի չափորոշիչով

Չնայած կրթության բյուջեի դրական աճին, 2021-2025 թթ. միջին ցուցանիշը կազմում է ՀՆԱ-ի ընդամենը 2.5%, մինչդեռ ՅՈՒՆԵՍԿՕ-ի չափանիշներով միջազգային ընդունված նվազագույն ցուցանիշն է ՀՆԱ-ի 4-6%: Սա ազդում է բարեփոխումների կայունության վրա։

Առաջարկ 4
Անհրաժեշտ է հստակ սահմանել՝ մինչև որ տարեթիվը Հայաստանը պետք է հասնի ՀՆԱ-ի առնվազն 4% կրթական ֆինանսավորմանը՝ որպես պետական քաղաքականության հստակ նպատակ։

Վերլուծություն՝

- https://mediaforedu.am/budget-in-armenia-and-eu-countries/
- https://mediaforedu.am/failed-education-reforms/

Առողջ սնունդ՝ միջին և ավագ դպրոցներում

2025 թ. մայիսի 5-ին Արարատի մարզի Զանգակատան դպրոցում «Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն, ընդունելով «Դասավանդիր Հայաստան» ծրագրով այդ դպրոցում հասարակագիտություն և պատմություն դասավանդող երիտասարդ ուսուցչի խնդրանքը,

մեդիագրագիտության դասընթաց է վարել, որի ժամանակ սովորողները բարձրացրել են առողջ սննդի հասանելիության հարցը: Նշվել է, որ առողջ ապրելակերպի դասընթացներին զուգահեռ անհրաժեշտ է իրական սննդակարգի ապահովում:

Առաջարկ 5
«Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն առաջարկում է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ պետական միջոցներով առնվազն միջին, իսկ հնարավորության դեպքում՝ նաև ավագ դպրոցի սովորողներին տաք և առողջ սնունդ ապահովելու ուղղությամբ՝ պարտադիր հաստատելով հետադարձ կապ սովորողների հետ: Զանգակատան դպրոցի 8-րդ դասարանցիները, որպես նախագծային աշխատանք, հենց այս խնդրի բարձրացումն են ընտրել՝ մեդիայի, տվյալ դեպքում՝ նամակի միջոցով, հարցը պետության հետ լուծելու և քաղաքացիական հետևողականություն ցուցաբերելու տեսքով:

Ուստի կից ներկայացվում է Զանգակատան դպրոցի 8-րդ դասարանցիների գրավոր դիմումը՝ ուղղված Ձեզ, և խնդրում՝ ըստ նպատակահարմարության, դրան ընթացք տալ պատշաճ կարգով: «Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն պատրաստակամ է աջակցելու, որ այս օրինակի հնարավոր դրական արդյունքը դառնա լավ նախադեպ և օրինակով հասանելի դառնա մեր մյուս ապագա քաղաքացիներին, որ իրենց հուզող խնդիրներն առնվազն արժանանում են առավելագույն պատշաճ արձագանքի:

Եզրափակում

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն հավատում է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությունը կարող է նպաստել հանրակրթության ոլորտի հիմնախնդիրների համակարգված լուծմանը և կրթական քաղաքականության շարունակական բարելավմանը՝ թափանցիկության, արդարության և որակի սկզբունքներով:

Հարգանքներով՝

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ նախագահ Անուշ Մարտիրոսյան

13.05.2025

www.mediaforedu.am